Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Իգնատի Առաքելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկ 2017 թվականի հունիսի 5-7-ը
4.	Հրավիրող կողմը	Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարար Լեոնիդ Զայաց
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	- մասնակցություն Մինսկում անցկացվող <<Բելագրո-2017>> միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին
6.	Քննարկված թեմաները	Տոհմային անասնաբուծություն, սերմնաբուծություն, անտառային տնտեսության կառավարում, Հայաստանում բելառուսական գյուղատնտեսական տեխնիկայի ծավալների ավելացում, ագրոհամալիրների նախագծում
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	- հանդիպում Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի նախարար Լեոնիդ Զայացի հետ: Հանդիպման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ԵԱՏՄ երկրներում ներմուծվող հիմնական գյուղատնտեսական մթերքների տեղական արտադրանքով փոխարինմանը, երկու երկրների գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, մասնավորապես՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքային խմբի ձևավորման շուրջ: Կողմերն անդրադարձ են կատարել նաև տոհմային անասնաբուծության և սերմնաբուծության ոլորտում համագործակցությանը վերաբերող հարցերին: - հանդիպում Բելառուսի Հանրապետության անտառային տնտեսության նախարար Միխայիլ Ամելյանովիչի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են անտառային տնտեսության կառավարմանը վերաբերող հարցեր: ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ ոլորտը Հայաստանի համար ունի ռազամավարական նշանակություն, իսկ Բելառուսը մեծ փորձ ունի այդ ոլորտում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար ստեղծել համատեղ աշխատանքային խումբ:

		- հանդիպում Բելառուսի Հանրապետության արդյունաբերության նախարար Վիտալի Վովկի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում իրականացվող գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության և գյուղատնտեսական տեխնիկայի կայանի (ԳՏԿ) հիմնադրման ծրագրերին վերաբերող հարցեր: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռքբերվել կազմել մասնագետների խումբ, որոնք կայցելեն Հայաստան՝ տեղում կուսումնասիրեն շուկան, կծանոթանան Գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերին: - Ագրոհամալիրների նախագծման և կառուցման աշխատանքներին վերաբերող հարցեր:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություն ները, ստորագրված փաստաթղթերը	
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	- Գյուղատնտեսության բնագավառում հայ-բելառուսական համագործակցության հետագա զարգացման նպատակով՝ մինչև 2017 թվականի հունիսի 16-ն առաջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ - Առաջարկվեց մինչև 2017 թվականի հունիսի 20-ը բելառուսական կողմին ուղարկել գրություն-հրավեր՝ Հայաստան այցելելու և հետագա հնարավոր համագործակցությունն առավել մանրամասն քննարկելու նպատակով
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի օգնական Միխայիլ Մոշչենոկ
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	09.06.2017թ.